ՆՈՐԱՀԱՅՏ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ

Ն. Մ. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

Առակը հայ ժողովրդական բանահյուսության ժանրային հարստություններից մեկն է և XII—XIII դդ. արդեն ներմուծվել է միջնադարյան հայ գրականության մեջ։

Հնում առակի նշանակությանը մեծ տեղ է տրվել։ Դրա լավագույն վկայություններն են հին սրբազան գրքերում (որպիսիք են Հին ու Նոր կտակարանները) առակների լայնածավալ արտացոլումները, որոնք հսկայական ազդեցություն են թողել թե՛ միջնադարյան մտածողության և թե՛ հայ հին գրականության զարգացման վրա։ Ժողովրդական բանահյուսությունն ուղեկցել է գրավոր գրականությանը հին ժամանակներից մինչև մեր օրերը։ Ներկայումս բանահյուսության բնագրային հարստության հնարավոր առանձնացումը հիմնականում համարվում է իրականացված, քանի որ դարերի ընթացքում կորուստը եղել է մեծ ու անդառնալի, այսինքն՝ առավել չափով ստեղծվել է, նվազ չափով՝ գրառվել ու պահպանվել։ Սակայն հայ միջնադարյան ձեռագրերում պահպանվել են հայ հին և միջնադարյան գրականության անհերիևնակ ու անանուն նմուշներ, որոնց մանրամասն հետազոտումը ի հայտ է բերում վերջիններիս բանահյուսական ծագումը։ Նշանավոր հայագետներ Ն. Մառն ու Մ. Աբեղյանը, Մխիթար Գոշն և Վարդան Այգեկցու առակները քննելիս նշել են, որ նրանց առակագրական ժողովածուներում, ի թիվս այլ աղբյուրների (Աստվածաշունչ, հին հունական առակագրություն) եղել է նաև հայ ժողովրդական բանահյուսությունը։

Մեր որոնումները Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում ի հայտ են բերել մի շարք նոր բանահյուսական նյութեր, որոնք ցարդ դրված չեն գիտական շրջանառության մեջ։ Դրանց թվում կան նաև ուշագրավ մի քանի առակներ[1], որոնք բանագիտական որոշակի արժեք ունեն։ Բայց նախ առակի մասին՝ ընդհանրապես։

Մեծանուն հայագետ Ն. Մառը առակներին նվիրված իր մեծածավալ աշխատության մեջ[2] գրում է, որ հին շրջանում հայ իրականության մեջ հանրաճանաչ են եղել Եզոպոսի առակները, թեև Եզոպոսի անունը հայ հին գրականության մեջ չի նշվել։

Առակներով և այլաբանությամբ խոսելը ընդունված է եղել Հին Արևելքում և Հին Հունաստանում։ Արևելքում այն դիտվում էր որպես խրատելու միջոց. խրատաբանություն, որով սերնդից սերունդ փոխանցվում էին մարդկության փորձառությամբ ձևք բերված բարոյական ավանդները։ Առակները, սակայն, ոչ միայն խրատելու համար են, այլև ընդվզելու, բողոքելու։ Այնտեղ, ուր բացահայտ ընդվզումը հնարավոր չէր, մարդիկ իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում առակով։ Առակների հայկական ժողովածուներ հին դարերում հայտնի չեն, իսկ ժողովրդի կողմից ստեղծված առակները գրի առնելու և մշակելու մասին խոսք անգամ լինել չէր կարող վաղ միջնադարում, այն պարզ պատճառով, որ գիրն ու գրականությունը գտնվում էր հոգևոր հայրերի ձեռքում։ Բայց և այնպես, հնարավոր չէր կասեցնել պատմության, կյանքի առաջընթացը, ու թեև հոգևոր հայրերը շրջանցում էին ժողովրդական բառ ու բանը, այնուամենայնիվ, չէին կարող լրիվ անտեսել այն, ինչն այնքան շատ էր սիրում ժողովուրդը, ինչը բեղմնավորվել ու աճ էր տվել նրա գրկում[3]։

[1] Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. № 2011, 2249։

[2] H. Марр. Сборники притч Вардана. Материалы для истории средневековой армянской литературы. Часть I—II, СПб., 1894—1899.

[3] Առակները ժողովելը և գրի առնելն անպատշաճ էր համարվում. հմմտ. Մանուկ Աբեղյան. Հայ հին գրականության պատմություն, գիրք երկրորդ (XI—XIX դարի 30-ական թթ.) Երևան, 1946, էջ 155։

Հարկ է նշել որ XI դարի կեսերից արդեն հայ կյանքում տեղի ունեցան փոփոխություններ, որոնք կապված էին կյանքի առաջընթացի ու աշխարհայեցողության փոփոխության հետ։ Մտածողության մեջ կատարվել էր մի հեղաշրջում, որի շնորհիվ կրոնական ոգին հետզհետե տեղի դիջում էր աշխարհիկ ոգուն և գրականությունը չէր կարող չազդվել դրանից։ Դա հայկական վերածննդի սկիզբն էր։ Բնական է, որ այն պետք է սկիզբ առներ քաղաքներում (այդ ժամանակ արդեն խոշոր առևտրական կենտրոններում՝ Անի, Արծն...) բնակվող աշխարհականների ձեռքով և հայ գրականության մեջ հայտնվում են ստեղծագործություններ, որոնք աշխարհիկ շնչով էին ներթափանցված (հայրեններ, հանելուկներ, առակներ, գրույցներ)։ Նոր ստեղծագործությունները միշտ հայերենով էին գրված, գրականությունը կամաց-կամաց ձերբազատվում էր միջնադարյան սխոլաստիկայից, ծաղկում, աշխարհականանում էր նոր ժանրերով։

Եվ այսպես, մեր հոգևոր հայրերը, XI—XII դարերից սկսած, անպատշաճ չէին համարում երբեմն, թեկուզ ոգրի ձևով, երգել աշխարհիկ կյանքի չարիքներն ու բարիքները, քաղաքների ծաղկումը կամ ավերումը[4]։ Եվ քանի որ եկեղեցականը կոչված է կրթելու, ուսուցանելու, նա սկսում է օգտագործել նաև այլաբանություններ խոսքի մեջ, ապա և առակներ։

Հայ մատենագրության մեջ առակների առաջին ժողովողն ու խմբագրողը Մխիթար Գոշն էր։ Նրա առակների թիվը հասնում է 190-ի։ Նա հավաքում էր ժողովրդի մեջ պատմվող, այլաբանական երանգով բաղմաթիվ ստեղծագործություններ (գրույց, առակախոսություն) և խմբագրում դրանք։ Նա առակները երկու մասի է բաժանում՝ առաջին մաս—բուն պատմություն, երկրորդ մաս—խրատ։

Առակի առաջին մասը կարող էր ունենալ ինչպես աշխարհիկ բնույթ, այնպես էլ հոգևոր, բայց երկրորդ մասը՝ խրատը, դրեթե միշտ ելնում էր քրիստոնեական կրոնի բարոյական սկզբունքներից։ Միջնադարյան առակագրական երկրորդ ժողովածուն կոչվում է «Վարդանայ առակք», որի հեղինակը Վարդան Այգեկցին է։ Նրա առակների թիվն անցնում է 300-ից։ Հետագայում այս ժողովածուի մեջ են մտել նաև այլ առակներ, որոնք Այգեկցու հետ կապ չունեն։ Ավելի ուշ ձեռագիր մատյաններում առակները դրառվում էին «Վարդանայ առակք» ընդհանուր խորագրի տակ, անկախ նրանց պատկանելությունից։ «Այսպես զարդանում են առակների ժողովածուները՝ դի զրանց համար պահանջ կար։ Դրանք հարկավոր էին քարոզչության համար և պետք է օգնեին քարոզիչներին, թե որ հոգեշահ խրատի համար ինչ առակ կարելի է պատմել»[6]։

Երբ այս ժողովածուները հանրաճանաչ են դառնում, օգտաշահ՝ հոգու և մարմնի, բացի զուտ հոգևոր բնույթ ունեցող առակներից, ստեղծվում են նաև աշխարհիկ բնույթ ունեցող, կենցաղային բովանդակությամբ առակներ։

Այժմ բերենք մի քանի առակների օրինակներ, որոնք անհեղինակ են և ցարդ գրված չեն եղել գիտական շրջանառության մեջ։

«Եղբայր ոմն գնաց առ հայրն և զամենեան հանցանս
իւր խոստովանեցաւ և տեսեալ յանուրջս հայրն.
զդատաստան եղեալ, և այրն այն մերկ, և մարմինն
ամէնեան հրբալից սլաքով 'ի լի և յորժամ խոստո- 1
վանէր, հրեշտակն աքցանով մէկ-մէկ քաշէր զսլաքն,
զամէնն քաշեալ, մի ևս մնաց, և զարթեալ հայրն և
պատմեաց նմա, թէ այլ մեղք է մնացել, որ չես
ասացիլ և ասէ. «Այո, օր մի զկոյր մի կատակ
արարի, զի ցեխն 'ի ներս ըղորդեցի և զցամաքն թողի»[7]։

Այս օրինակում տեսնում ենք հոգևոր աշխարհի առկայությունը, չկա խրատական վերջաբանը, որը կարևոր էր համարվում, թերևս առավել կարևոր, քան ինքը՝ առակը։ Այս առա-

---

4 Արիստակես Լաստիվերցի. Պատմություն. Երևան, 1971։

5 Մ. Աբեղյան. Միջնադարյան առակներն ու սոցիալական հարաբերությունները նրանց մեջ. Երևան, 1935 էջ, 15։

6 Մ. Աբեղյան. Հայ հին գրականության պատմություն. Երևան, 1944—46, էջ 166։

7 ՄՄ, ձեռ. № 2011, էջ 227։

կում քննադատվում է թեթևամտությունը, որը կարող է ուրիշի դժբախտության պատճառ դառնալ։ Առակը քարոզում է պատասխանատվության զգացում ունենալ, միաժամանակ հիշեցնում է, որ այս կյանքում զործած չխալների ու մեղքերի համար վաղ թե ուշ պատասխանատու են բոլորը։

Այժմ բերենք մեկ այլ օրինակ, ուր սկնհայտ է աշխարհիկ տարրը և կազմված՝ 2 մասից (պատմվածքից և խրատից)։ Սա ևս անհեղինակ է։

«Կայր ոմն մեծատուն և ունէր այդի և արտ։ Հայեցաւ
և ետես, զի փուշ էր բուսեալ ի նոսա։ Ասէ զորդին
իւր. «Երթ, քաղի զփուշն»,—և ելեալ որդին
երթա, անհոգութեամբ զօրն մինչ 'ի յիրիկուն
ննջէր և գայր քաղում աւուրս։ Յաւուր միում իմա-
ցեալ հայրն զանհոգութիւն, ասաց. «Որդի, գնայ
այսօր այդին, փուշը տեղի մի քաղի, որ մէկ մարդու
պարկելու չափով (լինի—Ն. Ի)։ Գնացեալ որդին
որպէս որ հրամայեց հայրն, նոյնպէս երկրորդումն
և երրորդումն օրն՝ հայեցաւ, որ քիչ-քիչ օր վրա
աւուր յառաջ դնաց, սկսաւ սիրտն ժրանալ և ուրախու-
թեամբ կտրեց զրանն։

Յուցէ առակս. ցորեանն քրիստոնեիքն են, փուշն մեղքն է,
հայրն՝ քահանայն, որդին մեղավորդն էր, որ թէ անհոգ
լինի՝ փուշն կամ է, և թե փոքր-փոքր գաս եկեղեցին,
աղօթիս, օր աւուր վրայ փուշն, որ է մեղքն՝ կպակասի»[8]։

Այս օրինակով մենք տեսնում ենք, թե ինչպես ակնհայտ աշխարհիկ բնույթ ունեցող առակին կցվել է խրատական վերջաբան՝ տալով նրան հոգևոր երանգ։ Սա մի փայլուն օրինակ է այն բանի, թե առակի միջոցով ինչպես փորձ էր արվում ամրապնդել կրոնասիրությունը։ Հայ դեղջուկը եկեղեցասեր է, միաժամանակ նաև՝ աշխատասեր։ Այս երկուսը միացնելով, համադրելով միմյանց և այլաբանական խորհուրդ տալով, կարելի էր հոգու համար օգտաշահ դաս տալ նրան։ Չէ՞ որ այլաբանությամբ հոգևորը նույնացվում է աշխարհիկի հետ, որը հասկանալի է դարձնում պահանջը։ Նման մի քանի առակներով հոգևորականը շատ ավելին կարող էր անել, քան դժվարըմբռնելի գրաբարով քարոզ կարդալով։

Մեկ այլ առակում խոսվում է մեծավոր մարդու նկատմամբ սիրո և հավատարմության մասին։

«Հոում տանուտեր մի կայր, ունէր շուն մի։ Եվ
թաղաւորն հրաման արար և տարան տանուտերն ի
բանդ։ Եվ գնաց շունն լալով զհետ նորա։ Երբ
տանուտերն տարան սպաննել, գնաց շունն աղաղակելով
հետ նորա։ Եվ յորժամ գլխատեցին տանուտերն, այնպես
աղաղակեց, որ ամենեանքն սարսեցան։ Եվ յորժամ հաց
տային շանն, առեալ տանէր դնէր ի դուռն տան իւրոյ։
Եվ իբրև ետես շունն ոչ ուտէ, տարան և ինքն ոչ կե-
րալ։ Եվ տանուտերն ընկեցին ի ծովն և տեսեալ շունն,
զինքն ընկեց ծովն, զի առցէ զմարմին տեառն իւրոյ՝
խեղդաւ ինքն։
Երանի տամ այն մարդկանն, որ զմիմիանս այնպէս սիրեն,
որպէս անբանս այսց։

8 ՄՄ, ձեռ. № 2249, էջ 156։
9 ՄՄ, ձեռ. № 625, էջ 100։

Այս առակի օրինակով քարոզվում է սեր մարդկանց նկատմամբ, նվիրվածություն և հավատարմություն, որի պատգամը կա նաև աստվածաշնչյան «Սիրիր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ» արտահայտության մեջ։

Պետք է նշել, որ թեև աշխարհիկ տարրը, նրա հետ նաև ժողովրդական լեզուն և մտածողությունը մուտք էին գործել եկեղեցական գրականություն, մասնավորապես առակների ձևով, այնուամենայնիվ, դա չէր բացառում զուտ հոգևոր բնույթի առակների ստեղծումը։ Կային առակներ, որոնց և՛ պատմվածքային մասը, և՛ վերջաբանը ընդգծված կրոնական բնույթ ունեին։ Ահա դրանցից մի քանիսը։

«Կայր ոմն ճգնաւոր, հարիւր տարի աղօթել էր, ապա
փոքր ինչ կու հպարտանար, թե իմ հարիւր տարոյ
աղօթիցս փոխան Աստուած որպիսի տեղ կու տայ
կամ որպէս շուք պատրաստել է։ Աւուր միում ետես
'ի տեսլեանն, որ յափշտակեցին հոգին իւր յերկինս,
անցաւ ընդ այն ճանապարհն, հասաւ հրային երկինք,
սկսաւ ճգնաւորս խիստ տապիլ ի հրոյ, ելաց և ձայնեց.
—Հո՞ տայր ինձ շուր, որ ահա այրեցայ։
Ասաց հրեշտակն.
—Այս տեղս առանց գնոյ մարդու շուր չեն տար։
Տուր ինչ բարութիւն ունիս, որ տաց քեզ շուր։
Ասէ ճգնաւորն.
—Տաց քեզ 10 տարոյ աղօթք։
Ասէ հրեշտակն.
—Այստեղ 10 տարոյ համար շուր չեն տար, մինչև որ 30
տարոյ աղօթքն,—ասաւ,—ետուր ճաշակ մի շուր։
Քիչ մի այլ գնաց, դարձեալ պապակեցաւ, 30 տարոյ
աղօթք ևս ետուր, կրկին ևս պապակեցաւ, զմնացեալ
աղօթին ևս ետուր և էառ շուր։ Անցաւ զճանապարհն և
գնաց առաջի Աստուծոյ։ Հրամայեաց Աստուած.
—Ո՞ւր ես եկեր դատարկ։
Ճգնաւորն ամօթալից ասէ.
—100 տարի ճգնութիւն արարի, մինչև որ հոս եկի,
դատարկեցայ։
Հրամայեաց Աստուած ամենայնի.
—Երբ քո 100 տարոյ ճգնութիւն երեք ճաշակ շրի փոխեցիր,
ապա գնա ինձմէ։
Հայնժամ դահի հարեալ զարթեաւ և իմացաւ զիւր հպարտութիւն ցոյցքն և սկսաւ լալ և ապաշխարհել, ապա
հաշտեցաւ պարտութիւն ինչէ ընդ նմա»[10]։

Իմաստությունը, խրատը ճանաչելը, Աստծուն հնազանդվելը հոգևոր փրկության մի հրավեր համարելով՝ այս առակը զգուշացնում է հեռու մնալ մեղքերի որոգայթներից։ Ճգնավորի օրինակով քարոզվում է խոնարհեցնել անձը, քանի որ. «Ով որ իր անձը բարձրացնէ, պիտի խոնարհի և ով որ իր անձը խոնարհեցնէ, պիտի բարձրանայ»[11]։

Այս «առասպելները» (իմա՝ առակները) պատգամում են լինել բարի, համբերատար, սիրել ու նեցուկ լինել մերձավորին, լինել աստվածապաշտ, կրոնասեր։ Առակների այլաբանական իմաստն ավելի է սրում նրա ներդործման դաստիարակչական ազդեցությունը։ Բերենք ևս մի օրինակ, ուր պատմվում է կյանքի հարաբերականության և անդրաշխարհի հավիտենականության, այս կյանքում ճիշտ ապրելու և այն աշխարհում արժանին ստանալու մասին։

---

10 ՄՄ, ձեռ. № 2249, էջ 157։

11 Աստուածաշունչ, Աւետարան ըստ Մաթէոսի, 23։

«Կայր ոմն աշակերտ ճգնաւորին, յաւուր միում գնացեալ ի քաղաքին, զի կայր ի քաղաքին մեծատուն մի ամբարտաւան և չարագոյն, զի մեռել էր մեծատունն և քաղաքն բովանդակեալ էին թաղումին մեծատունն և տարեալ մեծաւ շքով թաղեցին զնա։ Եւ ետես այր մի կրօնաւոր, զի վաղուց հետէ ճգնութեամբ մաշել էր զանձն իւր և վախճանուեալ էր և անկեալ մարմինն ի գետն և բազումք զմարմինն ծակոտէին։ Վասն խիստ տրտմեցաւ սուրբ հօրն և ասէ.

—Տեր իմ ե Աստուած, որպէս իցէ, զի մեծատունն այն չար մեռաւ ի քաղաքին և պատվով թաղեցաւ և սուրբ ճգնաւորս այս այսպիսի խեղճ և անարգեալ կերակուր գազանաց եղեալ է։

Զայս զմտաւ ածեալ ի տրտմութեանն ննջեաց և ետես ի տեսլեանն՝ ամպ լուսաւոր, ձայն եղև ամպոյն, որ ասէր.

—Մի տրտմիր որպէս կրօնաւոր, զի մեծատուն այն փոքր ինչ բարութիւն ունէր. վասն յայնու պատուով թաղեցաւ, որ աստ վճարի և երթայ 'ի հուրն յաւիտենական և այս ճգնաւորս փոքր ինչ փողատեսակ մեղս ունէր, վասն յայնու անարդաբար մեռաւ, որ զայն մեղքն սրբէ և անդ երթայ յաւիտենական հանդիստ։

Զարթեաւ աշակերտն և փառս իւր ասէր»12։

Այս առակները լի են մարդասիրության դասերով, դրանք դարեր ի վեր մատուցվել են հայ մարդուն՝ նրա հոգում հավատն ու բարոյախոսությունը ավելի ամրապնդելու նպատակով։ Այս առակները եղել են հոգևոր սնունդ հայ մարդու համար և ինչպես նկատում ենք, դրանց լեզուն մոտ է խոսակցական բառ ու բանին, հեռու՝ խրթին աստվածաբանական խորհրդածություններից։

Վերը նշված առակները մի անգամ ևս հավաստում են, թե որքան խոր ու արմատացած է եղել մարդասիրությունը հայ ժողովրդի գիտակցության մեջ։

12 ՄՄ, ձեռ. № 2249, էջ 159։